Դանիել Վարուժան

Ջուրին վրա

Ելվագե՛ կիթառդ, ո՛վ իմ Մելինա,
Լուսինն է ցաթեր, վերքի պես լանջքիս.
Երգդ, իբրև ըսպունգ, կը ծըծե ահա
Աստղերն երկընքին, արցունքներն աչքիս:

Աշխարհը մոռնա՛նք. ջուրին վրա՝ լուսնին
Լուսասփյուռ ճամբա՛ն ըլլա մեր ճամբան…
Երբ պըսակեմ գլուխս ողկույզով, Մելի՛ն,
Սըրտիս արյուննե՛ն իսկ գինի կ'ըլլան:

Թող երգդ հըրճըվի՛. Ծովը լուսավետ
Անդունդին աղով կ'օծե գանգուրներդ՝
Ջոր խառնեց ահա սյուքը՝ լարերուդ:

Թող երգդ արփենա՛. լեցուցի գինին
Կիթառիդ տոսախ պորտին մեջ հըրուտ…
Աստղի՛կն է նըստեր մեր նավուն քիթին: